ԴԱՆԻԵԼ ԴՋԱՖԱՐԻ

ՀԱՅ ԿՈՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

(ՀԱՄԱՌՈՏ ԲԵՌԵՐՔՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ԴԱՆԻԵԼ ԴԶՆՈՒՆԻ

ՀԱՅ ԿԵՐԳԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ
(ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ)

Խմբագիր՝ ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

«ԼՈՒՅՍ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1977

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ԴԱՆԻԵԼ ԴԶՆՈՒՆԻ

ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ
(ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ)

Խմբագիր՝ ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

«ԼՈՒՅՍ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1977

Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան Գեղարվեստական ուսումնարանում, երեք տարի՝ Երևանի Գեղարվեստական ինստիտուտում, իսկ 1956 թ. ավարտել Լենինգրադի Ի. Ռեպինի անվան Գեղարվեստի ինստիտուտը։ Գլխավոր գործերից են՝ «Ալագյազի արոտավայրերում», «Քոչը», «Բագրատ», «Հայաստանի լեռներում», «Հնոցապաններ», «Զուլոդը», «Որոտանը սանձող մարդիկ», «Քաջարանի լույսերը»։

Մատենագրություն. Захар Хачатрян (Буклет), Ереван, 1972 г.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԻՄԱՍՏՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1897, Կ. Պոլիս), նկարիչ՝ կիրառական արվեստի գծով։

1924 թ. ավարտել է Բաքվի կիրառական արվեստի դպրոցը, աշխատել Բաքվի Բանվորական թատրոնում որպես նկարիչ զգեստների գծով։ 1929 թ. ապրում է Մոսկվայում։ Աշխատել է «Всекохудожник»-ում, որպես գործվածքեղենի դեկորատիվ նկարազարդող, եղել է «Կիրառական արվեստ» ընկերության կոոպերատիվի գեղեկ։ Բազմաթիվ կտորների էսքիզների հեղինակ է։

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐՍԵՆԻ (1912, Թիֆլիս) գեղանկարիչ։

1928 թ. սովորել է Մ. Թոիձեի ստուդիայում։ Կիրովականում դասավանդել է նկարչական դպրոցում։ 1966 թ. ավարտել է Կրասնոդարի Մանկավարժական ինստիտուտի գեղարվեստական-գրաֆիկական ֆակուլտետը։

Գլխավոր աշխատանքներից են՝ «Հիշիր այս, որդիս», «Լենինը Ռազլիվում», Վ. Ի. Լենինի, Ս. Շահումյանի դիմանկարները, «Հին կամուրջը», «Կղմինդրի գործարանը» և այլն։

Ապրում է Նիկելում (Մուրմանսկի շրջան)։

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԿԱՐԱՊԵՏԻ (1920, Երևան), գեղանկարիչ։

1939 թ. ավարտել է Երևանի Գեղարվեստական ուսումնարանը, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին։ 1951 թ. ավարտել է Երևանի Գեղարվեստի ինստիտուտը։ Ցուցահանդեսներին մասնակցում է 1949 թ.։

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲԻ (1926, Բաքու), գեղանկարիչ-քանդակագործ, արվեստաբան։

1946 թ. ավարտել է Բաքվի Գեղարվեստական ուսումնարանը, իսկ 1954 թ.՝ Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտը։ Ցուցահանդեսներին մասնակցում է 1954 թ.։ «Հայկական ՍՍՀ դեկորատիվ քարերն ու նրանց օգտագործումը ժամանակակից ճարտարապետության մեջ» աշխատության համար շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան (1968 թ.)։

Նրա գործերից են՝ «Աղասի Խանջյանի դիմաքանդակը», «Աղջկա գլուխը», Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի և Գիտությունների ակադեմիայի որմնանկարները, ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ, նվիրված Հայաստանի բնական քարերին ու նրանց կիրառմանը։

Մատենագրություն. Հ. Իգիթյան, Զարդարված ճանապարհով։ «Սով. Հայաստան», 1963 թ. № 3, Г. Игитян, О творчестве Ованеса Хачатуряна. «Декоративное искусство СССР», 1964 г., № 8.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՇԱՀԵՆ ԳԵՎՈՐԳԻ (1934, Հալեպ (Սիրիա), արվեստաբան։

1946 թ. Հալեպից ներգաղթել է Հայաստան։ 1965 թ. ավարտել է ՍՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի Լենինգրադի Ի. Ռեպինի անվան ինստիտուտը։ 1967 թ. Մ. Սարյանի տուն-թանգարանի դիրեկտորն է։

Նրա գործերից են՝ Պետրոս Կոնտուրաջյան (Երևան, 1966 թ.), Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ (Երևան, 1970 թ.)։ Հայկական գեղանկարչություն (ալբոմի առաջաբան, Երևան, 1967), Մարտիրոս Սարյանի թանգարան (ալբոմի առաջաբանը, Մոսկվա, 1972) և բազմաթիվ հոդվածներ։

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈՒԴՈԼՖ ԼՈՐԻՍԻ (1937, Երևան), գրաֆիկ, գեղանկարիչ։

Սովորել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան Գեղարվեստական ուսումնարանում։ Ցուցահանդեսներին մասնակցում է 1957 թ.։ Գլխավոր գործերից են՝ «Ուսանո-

հով։ «Սով. Հայաստան», 1965 թ. № 3։

О творчестве Ованеса Хачатуряна. «Декоративное искусство СССР», 1964 г., № 8.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՇԱՀԵՆ ԳԵՎՈՐԳԻ (1934, Հալեպ (Սիրիա), արվեստաբան։

1946 թ. Հալեպից ներգաղթել է Հայաստան։ 1965 թ. ավարտել է ՍՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի Լենինգրադի Ի. Ռեպինի անվան ինստիտուտը։ 1967 թ. Մ. Սարյանի տուն-թանգարանի դիրեկտորն է։

Նրա գործերից են՝ Պետրոս Կոնտուրաջյան (Երևան, 1966 թ.), Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ (Երևան, 1970 թ.)։ Հայկական գեղանկարչություն (ալբոմի առաջաբան, Երևան, 1967), Մարտիրոս Սարյանի թանգարան (ալբոմի առաջաբանը, Մոսկվա, 1972) և բազմաթիվ հոդվածներ։

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈՒԴՈԼՖ ԼՈՐԻՍԻ (1937, Երևան), գրաֆիկ, գեղանկարիչ։

Սովորել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան Գեղարվեստական ուսումնարանում։ Ցուցահանդեսներին մասնակցում է 1957 թ.։ Գլխավոր գործերից են՝ «Ուսանո-

գուհու դիմանկար» (Բրոնզե մեդալ՝ Վիեննայի 7-րդ երիտասարդական միջազգային ցուցահանդեսում), «Մայրություն», «Օհան Դուրյանի դիմանկարը», «Տ. Մախմուրյանի դիմանկարը», «Աղջիկը ընթերցելիս», «Երիտասարդություն», «Կոմիտաս», «Ելիր, ում կյանքն անիծել է»։

Մատենագրություն. Рудольф Хачатрян (Буклет), Ереван, 1972 г.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏԻ (1886, Մալաթիա (Թուրքիա)— 1947, Փարիզ), գեղանկարիչ։

Սովորել է Էրզրումի Սանասարյան վարժարանում, իսկ 1911 թ. ավարտել է Հռոմի Գեղարվեստի ակադեմիան։ Փարիզում ոսկե մեդալով ավարտում է Պետական զարդարվեստի դպրոցը։ Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին եղել է Կովկասում՝ Թիֆլիս, Բաթումի, Դիլիջան, Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա, Էջմիածին, որտեղ նկարել է հայ գաղթականների։ 1922—1934 թթ. կատարել է Սպահանի Ալի-Գափու և Չեհել Սոթուն պալատների, Նոր Ջուղայի Հայ խոջաների տների որմնանկարների, իսկ 1939—40 թթ. Աջանտայի որմնափոր տաճարի որմնանկարի ընդօրինակությունները։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Կ. Պոլսում (1919), Կահիրեում (1922), Լոնդոնում և Անտրվերպենում (1925), Վիեննայում (1922), Փարիզում (1925)։ Պարսկական և հնդկական որմնանկարների ցուցահանդեսները բացվել են ԱՄՆ-ում, Փարիզում (1947), Երևանում (1971)։

Նրա գործերից հայտնի են՝ «Պատսպարյալները գնում են հաց բերելու», «Որբերը ճաշի սպասման ժամին», «Աղբյուրի մոտ», «Որբուհին հյուսելիս», «Սասունցի կանայք», «Հայ գյուղացի», «Հուսահատվածները», «Վանեցի փախստականը», «Ավերակներում», «Ուղեկորույսները», «Տոնական օր Սևանում», «Հարսանիքից առաջ», «Խրախճանք Օշականում», «Հարսի երգը», «Հայկական ժողովրդական պարեր», «Տոնական օր Վարագում», «Ծաղիկներ» և այլն։

Մատենագրություն. Կատալոգ Ս. Խաչատրյանի հնդկական որմնանկարների ցուցահանդեսի։ Երևան, 1971 թ., Ռ. Շիշմանյան, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958 թ., Onnig Avédissian, Peintres et sculpteurs Armeniens. Le Caire, 1959.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՎԱ (ՎԱՎԱ ՍԱՐԳԻՍ), (1896, Տրապիզոն (Թուրքիա), գեղանկարիչ։

Ուսուցիչը եղել է Ս. Խաչատրյանը՝ ամուսինն ու ընկերը։ 1946 թ. Նյու-Յորքում բացել է իր առաջին անհատական ցուցահանդեսը, հետագայում կազմակերպել է ավելի քան 20 ցուցահանդես, ինչպես Նյու-Յորքում (1946—1966), Ֆրեզնոյում, Դետրոիտում և Լոս Անջելեսում (1949), Փարիզում (1950), Կահիրեում և Ալեքսանդրիայում՝ (1951), Պոլսում՝ (1952), Հռոմում, Վենետիկում, Միլանում (1957) և այլն։ 1927, 1964, 1971 և 1975 թթ. այցելել է Սովետական Հայաստան։ Նշանակալից աշխատանքներից են՝ «Կարոտ», «Դիմակահանդես», «Նայրյան աղջիկներ», «Երկու բարեկամներ», «Մենություն», «Ինքնադիմանկար», «Պարսկուհին», «Նորմանդացի աղջիկը», «Արարատ», «Սանահին»։

Ապրում է Նյու-Յորքում։

Մատենագրություն. Նկարչուհի Վավա Սարգսյանի ցուցահանդեսը։ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1; Onnig Avédissian, Peintres et sculpteurs Armeniens. Le Caire, 1959.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ ԱՐՇԱԿԻ (1921, Արտաշատ), քանդակագործ։

1951 թ. ավարտել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանը։ Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին։ 1958 թ. ավարտել է Գեղարվեստա-թատերական ինստիտուտը։

ԽԱՉԱՏՈՒՐ (10-րդ դարի վերջ— 11-րդ դարի սկիզբ), քարգործ վարպետ։

Ստորագրությունը պահպանվել է Նոր Բայազետի (Կա-